8. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ, օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝
 - ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
 - կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
 - կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:
2. Ուսանողն իրավունք ունի՝
 - – ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Կենտրոնի կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
 - – միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- – փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- շարունակելու ուսումնառությունը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում՝ համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

15. Եզրափակիչ դրույթներ

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2014 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար:

II ԲԱԺԻՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Նեյրոֆիզիոլոգիայի և տոքսիոլոգիայի ամբիոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում՝ «Նեյրոֆիզիոլոգիա և տոքսիոլոգիա» ծրագրով:

1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ:

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		
Լրացական դասընթացներ	0	2
Ընդհանուր կրթամաս	6	2
Մասնագիտական պարտադիր կրթամաս	48	15
Կամրնորական դասընթացներ	18	6
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		
Գիտական սեմինար	12	4
Գիտահետազոտական աշխատանք	18	3
Գիտահետազոտական պրակտիկա	3	1
Գիտամանկավարժ. պրակտիկա	3	1
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	1
ԸՆԴԱՄԵՆԸ	120	19

Կիսամյակ	I	II	III	IV	Ընդամենը
Ուսումնական կառուցամաս, կրեդիտ	27	24	21	0	72
Հետազոտական կառուցամաս, կրեդիտ	3	6	9	30	48
Ընդամենը, կրեդիտ	30	30	30	30	120

Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցմանը և պրակտիկաներին, իսկ 4-ը քննաշրջանին: Ծրագրի առաջին երեք կիսամյակների սկզբում մեկ շաբաթ հատկացվում է մագիստրանտի անհատական ուսումնական ծրագրի ձևավորմանը:

Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 120 կրեդիտի:

2. Ծրագրի բովանդակությունը

2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ **լրացական դասընթացներ, ընդհանուր կրթամաս, մասնագիտական պարտադիր կրթամաս և կամընտրական դասընթացներ**: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

Լրացական դասընթացներ

Լրացական դասընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից էլնելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ ուսանողի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ) ⁸	Կիսամյակ	Գնահատման ձևը
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն	0	32	I	Ստուգարք
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն	0	32	II	Ստուգարք

Ընդհանուր դասընթացների կրթամաս

Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 6 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ «*Համակարգչագիտություն*» և «*Մասնագիտության փիլիսոփայական հարցեր*»: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից էլնելով, *մասնագիտական պարտադիր կրթամասին* հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

⁸ Այսուհետ՝ *դ* – դասախոսություն, *գ* – գործնական կամ սեմինար պարապմունք, *լ* – լաբորատոր աշխատանք:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
05/M08	Համակարգչագիտություն	3	24/8/0	I	Քննություն
16/M01	Մասնագիտության փիլիսոփայական հարցեր	3	32/0/0	I	Քննություն

Մասնագիտական պարտադիր կրթամաս

Մասնագիտական պարտադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեքից հինգ կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատաժամայլը ծրագրում սահմանված է 48 կրեդիտ: Մա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Մագիստրոսական ծրագիր՝ «Նեյրոֆիզիոլոգիա և տոքսիոլոգիա»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
03/M17	Կլինիկական կենսաքիմիա	4	26/4/2	I	Քննություն
10/M13	Հոգեֆիզիոլոգիա	4	26/6/0	I	Քննություն
21/M01	Նեյրոֆիզիոլոգիայի հիմունքներ	4	32/0/0	I	Քննություն
21/M02	Տոքսիոլոգիան, որպես տոքսիկոլոգիայի մաս	3	32/0/0	I	Քննություն
21/M06	Էլեկտրաֆիզիոլոգիա	3	26/6/0	II	Քննություն
21/M07	Նեյրոֆիզիոլոգիական պրոցեսների մոլեկուլային հիմունքներ	3	32/0/0	II	Քննություն
21/M08	Նեյրոֆիզիոլոգիայի ուսումնասիրության ժամանակակից մեթոդներ	3	32/0/0	II	Քննություն
21/M09	Տոքսիկոմետրիա և հետազոտությունների ժամանակակից մեթոդներ	3	32/0/0	II	Քննություն
21/M10	Տոքսինների քիմիա և կենսաքիմիա	3	26/4/2	II	Քննություն
21/M11	Տոքսինների ձագումնաբանություն	3	32/0/0	II	Քննություն
21/M15	Նեյրոդեգեներատիվ պաթոլոգ իաներ: Նեյրոֆիզիոլոգիա:	3	32/0/0	III	Քննություն
21/M16	Նեյրոէնդոկրինային հարաբերություններ	3	32/0/0	III	Քննություն
21/M17	Նեյրոպլաստիկության մեխանիզմներ	3	32/0/0	III	Քննություն

21/M19	Կենդանական ծագումով թույլներ	3	32/0/0	III	Քննություն
21/M20	Մանրէաբանական ծագում ունեցող թույլներ	3	32/0/0	III	Քննություն

Կամրնտրական դասընթացներ

Կամրնտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 274-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամրնտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամրնտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝ «Նեյրոֆիզիոլոգիա և տոքսինոլոգիա»

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/չ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
21/M04	Համեմատական և էվոլյուցիոն նեյրոֆիզիոլոգիա	3	24/8/0	I	Քննություն
21/M05	Կլինիկական տոքսինոլոգիա	3	32/0/0	I	Քննություն
21/M12	Հակաթույլների և շիճուկների մեթոդաբանություն	3	32/0/0	II	Քննություն
21/M13	Նեյրոֆիզիոլոգիական պաթոլոգիաների կենդանական մոդելներ	3	30/2/0	II	Քննություն
21/M21	Տեղեկատվությունը և նեյրոֆիզիոլոգիայի էվոլյուցիան	3	32/0/0	III	Քննություն
21/M22	Կիրառական տոքսինոլոգիա	3	32/0/0	III	Քննություն
21/M23	Նեյրոքիմիա	3	32/0/0	I	Քննություն
21/M24	Նեյրոնի և նեյրոնային ցանցերի մաթեմատիկական մոդելավորում	3	32/0/0	III	Քննություն
21/M64	Վիճակագրական վերլուծություն	3	32/0/0	II	Քննություն

2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար**, **գիտահետազոտական աշխատանք**, **գիտահետազոտական պրակտիկա**, **գիտամանկավարժական պրակտիկա** և **մագիստրոսական թեզ**:

Գիտական սեմինարը ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի ինդիքներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնառության 2-րդ, 3-րդ և 4 կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատաժամակով:

Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատաժամակ:

Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատաժամակ:

Մագիստրոսական թեզի կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատաժամակ:

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Նեյրոֆիզիոլոգիա և տոքսիոլոգիա» ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

05/M08. Համակարգչագիտություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Առարկայի նպատակն է ուսումնառության ընթացքում ուսանողների մեջ զարգացնել ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ինչպես նաև համակարգչային քիմիայի ոլորտին առնչվող ընդհանուր գործնական գիտելիքներ: Ծանոթացնել ինֆորմատիկայի բնագավառում տարբեր մասնագիտական ծրագրերի ուսումնասիրություններով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** ինչպիսի մասնագիտական ծրագրային փաթեթներ կան, և դրանց կիրառելիությունը գիտության զանազան բնագավառներում:

2. կկարողանա

2.1 տիրապետել Windows օպերացիոն համակարգին:

2.2 Պատրաստել/մշակել տարբեր բարդության տեքստեր:

2.3 Կառուցել բարդ մոլեկուլային համակարգեր:

2.4 Կատարել համակարգչային փորձեր:

2.5 Հեշտությամբ օգտվել համացանցից:

3. կտիրապետի

3.1 օպերացիոն համակարգում աշխատանքների կազմակերպման մեխանիզմներին:

3.2. Windows օպերացիոն միջավայրում տեքստային ծրագրային փաթեթների հնարավորություններին:

3.2 Hyperchem ծրագրային փաթեթի առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հաշվողական մեքենաների պատմությունը, տարբեր սերնդի մեքենաներ: Համակարգչի կառուցվածքը, էլքի-մուտքի սարքեր: Օպերացիոն համակարգեր, հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: Հարակից/պերիֆերիկ սարքեր: **Թեմա 2**՝ Կիրառական ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: Ցանցեր և Համացանց: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր: **Թեմա 3**՝ MS Office ծրագրային փաթեթի տարաբնույթ մոդուլները: MS Office Word տեքստային խմբագրիչ - տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աղյուսակների հետ աշխատանք՝ MS Office Excel մոդուլի օգնությամբ: MS Office Powerpoint մոդուլի առանձնահատկությունները: **Թեմա 4**՝ Մասնագիտական

ծրագրային փաթեթներ: Տվյալների բազա: Hyperchem ծրագրային փաթեթ: Ունիվերսալ տվյալների հենքեր, Protein Data Bank: **Թեմա 5**՝ Համակարգչային փորձ՝ Hyperchem ծրագրային փաթեթի օգնությամբ: Քվանտային քիմիա, կիսա-էմպիրիկ (semi-empirical), ոչ էմպիրիկ կամ արմատական մոտեցումներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.
Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

16/M01. Մասնագիտության փիլիսոփայական հարցեր (3 կրեդիտ)
Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է փիլիսոփայությունը դարձնել մասնագիտական մտածողության մշակույթի անհրաժեշտ տարրերից մեկը: Այն կոչված է ընդլայնելու մագիստրանտների հոգևոր մտահորիզոնը, հաղթահարելու մասնագիտական սահմանափակության շրջանակները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

- 1. կծանոթանա** դասական և հետդասական փիլիսոփայական հայեցակարգերի հետ,
- 2. ձևաք կրերի** մասնագիտական և փիլիսոփայական հիմնահարցերը քննադատաբար վերլուծելու և գնահատելու հմտություններ և ունակություններ,
- 3. կծանոթանա** միջառարկայական հետազոտությունների մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերի հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անտիկ փիլիսոփայության ընդհանուր ակնարկ: **Թեմա 2**՝ Ֆրենսիս Բեկոնը որպես բրիտանական էմպիրիզմի հիմնադիր: **Թեմա 3**՝ Բրիտանական էմպիրիզմի ակունքները, Ջ. Լոկ, Ջ. Բերկլի, Դ. Հյում: **Թեմա 4**՝ Ռ. Դեկարտը որպես եվրոպական ազդեցիկ հիմնադիր: **Թեմա 5**՝ Բ. Կանտը որպես գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր: **Թեմա 6**՝ Նեոկանտականություն: **Թեմա 7**՝ Առաջին պոզիտիվիզմ (Կոնտ, Սպենսեր, Միլ): **Թեմա 8**՝ Երկրորդ պոզիտիվիզմ (Մախ, Դյուգեմ, Պուանկարե), **Թեմա 9**՝ Ամերիկյան պրագմատիզմ: **Թեմա 10**՝ Գիտության փիլիսոփայությունը Լ. Վիտգենշտեյնի հայեցակարգի մեջ: **Թեմա 11**՝ XX դ. տրամաբանական պոզիտիվիզմը: **Թեմա 12**՝

Պոստպոզիտիվիզմ: **Թեմա 13**՝ Տեսության մեթոդաբանական կարգավորիչները: **Թեմա 14**՝ Հերմենևտիկան որպես մարդկային կեցության մասին փիլիսոփայական ուսմունք: **Թեմա 15**՝ Էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը: **Թեմա 16**՝ Լեզվի փիլիսոփայությունը: **Թեմա 17**՝ Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը: **Թեմա 18**՝ Գլոբալիզմի փիլիսոփայությունը: **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունից մեկը անց է կացվում մագիստրոսի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Լրացական դասընթացներ

18/M01. Մասնագիտական օտար լեզու /անգլերեն (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, եզրափակիչ ստուգարքով դասընթաց

Նպատակը.

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում զարգացնել ուսանողների բանավոր և գրավոր խոսքը, կարողանալ անգլերեն լեզվով հասկանալ թեմատիկ տեքստեր, ընդլայնել մասնագիտական բառապաշարը: Ծրագրի նպատակն է նաև ուսանողներին զինել անգլերեն լեզվի բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող գիտելիքներով: Անգլերեն լեզվով խորացնել և ընդլայնել ուսանողների՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտին վերաբերվող ընդհանուր տեսական և պրակտիկ գիտելիքները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

- 1. կիմանա** լսել և հասկանալ լսածի հիմնական միտքը և հատուկ ինֆորմացիան վերարտադրել և վերլուծել տվյալ թեմաները,
- 2. կհասկանա** մասնագիտական տերմինալոգիան, Գրավոր խոսքի շարադրման առանձնահատուկ կառույցները, թեմատիկ մասնագիտական նոր բառապաշարը,
- 3. կկարողանա** ընթերցել բնագրային տեքստը, անգլերեն լեզվով բացատրել մասնագիտական տերմինները, քննարկել թեման՝ օգտագործելով նոր թեմատիկ մասնագիտական բառապաշար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Working in the IT industry: **Թեմա 2**՝ Grammar: Present Simple, Present Continuous, stative verbs. **Թեմա 3**՝ Computer systems.

Թեմա 4՝ Grammar: Past Simple, Past Continuous, used to. **Թեմա 5**՝ Websites. **Թեմա 6**՝ Countable and uncountable nouns & Articles: **Թեմա 7**՝ Database. **Թեմա 8**՝ Prepositions of time and place. **Թեմա 9**՝ E-commerce. **Թեմա 10**՝ Pronouns and possessive determiners. **Թեմա 11**՝ Network systems . **Թեմա 12**՝ Relative clauses, Vocabulary: People and daily life. **Թեմա 13**՝ IT support **Թեմա 14**՝ Future time (present continuous, will be going to, present simple). **Թեմա 15**՝ IT security and safety. **Թեմա 16**՝ *So* and *such, too* and *enough*. **Թեմա 17**՝ The Internet. **Թեմա 18**՝ Direct and indirect objects. **Թեմա 19**՝ The future of computers. No worms in these apples. **Թեմա 20**՝ Grammar: -*ing* and infinitive. **Թեմա 21**՝ Computer viruses. **Թեմա 22**՝ Comparatives and superlatives. **Թեմա 23**՝ Recent developments in IT. **Թեմա 24**՝ Modals and semi-modals. **Թեմա 25**՝ My resource map. **Թեմա 26**՝ Data processing. **Թեմա 27**՝ Adjectives and adverbs. **Թեմա 28**՝ Computing support. **Թեմա 29**՝ Conditionals. **Թեմա 30**՝ The ex-Hacker. **Թեմա 31**՝ Verbal complements. **Թեմա 32**՝ The future of IT.

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները
 Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թեստի դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

03/M17. Կլինիկական կենսաքիմիա (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել կլինիկական կենսաքիմիայի ոլորտին վերաբերվող հետազոտական առանձնահատկություններին, առարկայի՝ նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և միջոցների մասին: Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ, ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև տեսական գիտելիքները գործնական հմտությունների հետ համադրելու ունակություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

1.1 կլինիկական կենսաքիմիական հիմնական դրույթները:

1.2 Սպիտակուցների, լիպիդների, ամինաթթուների, ճարպերի, պուրինային և պիրիմիդինային հիմքերի փոխակերպման հիմնական մետաբոլիկ ուղիները:

1.3 Մետաբոլիկ հեմեոստազը նորմայում ապահովող ընդհանուր ինտեգրատիվ ուղիները:

1.4 Ածխաջրային, լիպիդային, ամինաթթվային հորմոնալ կարգավորման պաթոֆիզիական պրոցեսների զարգացման մեխանիզմները:

1.5 Առանձին օրգանների, հյուսվածքների կենսաքիմիական ֆունկցիաների և նրանցում մոլեկուլյար պրոցեսների առանձնահատկությունները: Կլինիկական կենսաքիմիական հետազոտությունների սահմանները ախտորոշման և բուժման միասնական համակարգում:

2. կկարողանա

2.1 կանխատեսել կենսաբանական ակտիվ նյութերի կենսաքիմիական փոխակերպումների ուղղությունը և արդյունքները:

2.2 Մեկնաբանել արյան պլազմայի կենսաքիմիական հետազոտությունների տվյալները և գնահատել դրանց համապատասխան օրգանների, հյուսվածքների, օրգան համակարգերի վիճակները:

2.3 Դիֆերենցիալ ախտորոշման նպատակով բուժման որակի գնահատման համար կազմել կենսաքիմիական հետազոտությունների օպտիմալ հավաքակազմ:

2.4 Բնութագրել տարբեր պաթոլոգիկ, տարիքային և ֆիզիոլոգիական տարբեր վիճակների ժամանակ կենսաքիմիական հետազոտությունների տվյալների փոփոխությունները, տարբեր պաթոլոգիաների սուր և պասիվ շրջանների ժամանակ արյան պլազմայի բիոքիմիական ցուցանիշների փոփոխությունները:

2.5 Մեկնաբանել կենսաքիմիական հետազոտությունների արդյունքում ստացած տվյալների նշանակությունը նրանց փոխկապվածությունը, կենսաքիմիական հետազոտությունների տվյալների լաբորատոր սխալների պատճառները:

3. կտիրապետի

3.1 առավել հաճախ հանդիպող լաբորատոր թեստերի հավաստիության սահմանափակման հասկացությանը:

3.2 Օրգանիզմի կենսաբանական հեղուկների կենսաքիմիական հետազոտությունների տվյալների հիման վրա կատարել նախնական դիագնոստիկ մեկնաբանման փորձառոյթներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կլինիկական կենսաքիմիայի նշանակությունը բժշկության համար: **Թեմա 2՝** Լաբորատորային հետազոտությունների որակի վերահսկում: **Թեմա 3՝** Արյան մակարդման և հակամակարդման համակարգը և դրա խանգարումները: **Թեմա 4՝** Սպիտակուցներ, սպիտակուցների փոխանակության խանգարումները: **Թեմա 5՝** Ֆերմենտներ, ֆերմենտոդիագնոստիկա:

Թեմա 6՝ Պորֆիրինների փոխանակությունը և նրանց խանգարումները: **Թեմա 7՝** Լեղապիգմենտների փոխանակությունը նորմայում և պոթոլոգիայում: **Թեմա 8՝** Ճարպեր և նրանց փոխանակության խանգարումները: **Թեմա 9՝** Ջրի, հանքային նյութերի փոխանակության խանգարումները: **Թեմա 10՝** Արյան թթվա-հիմնային վիճակ, նրա խանգարումները: **Թեմա 11՝** Ածխաջրեր և նրանց փոխանակության խանգարումները: **Թեմա 12՝** Վիտամիններ: **Թեմա 13՝** Հորմոնների փոխանակության խանգարումները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

10/M13. Հոգեֆիզիոլոգիա (4 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Հոգեֆիզիոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է հոգեբանական երևույթների ֆիզիոլոգիական մեխանիզմները, օրգանիզմի ընդհանուր ֆունկցիոնալ վիճակը, մարդկանց վարքագծային դրսևորումների անհատական առանձնահատկությունները: Հոգեֆիզիոլոգիայի նպատակն է՝ հոգեբանական գործընթացների ֆիզիոլոգիական մեխանիզմների ուսումնասիրությունը համակարգային, նեյրոնային, սինապսային և մոլեկուլային մակարդակներում: Տեսական հոգեֆիզիոլոգիայի խնդիրն է մարդու երեք էության՝ հոգեկան, հոգեբանական և

ֆիզիկական տարրերից յուրաքանչյուրի ներքին կազմակերպման առանձնահատկությունների ֆիզիոլոգիական նկարագրությունը (նորմայում և ախտահարումների պայմաններում): Կիրառական հոգեֆիզիոլոգիայի խնդիրն է գիտականորեն հիմնավորված կառուցվածքա-ֆունկցիոնալ մեթոդների մշակումը մարդու վարքագծի ինչպես ամբողջությամբ, այնպես էլ առանձին համակարգերի ուսումնասիրության և օպտիմալիզացման ուղղությամբ (նորմայում և ախտահարումների պայմաններում):

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

- 1.1 հասկացություն «Հոգեֆիզիոլոգիա» գիտության մասին,
- 1.2 հոգեֆիզիոլոգիական հետազոտություններում կիրառվող մեթոդները,
- 1.3 կոգնիտիվ գործընթացների հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները,
- 1.4 գիտակցական և ենթագիտակցական գործունեության հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները,
- 1.5 սթրեսի և հուզականության հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները,
- 1.6 ֆունկցիոնալ համակարգերի տեսությունը,
- 1.7 «ֆունկցիոնալ վիճակ» հասկացությունը,
- 1.8 դիֆերենցիալ հոգեֆիզիոլոգիա,
- 1.9 աշխատանքային գործունեության հոգեֆիզիոլոգիա:

2. կկարողանա

2.1 իրականացնել՝ Ֆունկցիոնալ վիճակի գնահատում, Ֆունկցիոնալ համակարգերի դասակարգում ըստ գործընթացների, հոգեբանական մի շարք հատկանիշների որոշում, տագնապայնության մակարդակի որոշում, անհատական-տիպային առանձնահատկությունների որոշում:

2.2 Բնութագրել՝ հոգեֆիզիոլոգիայի հիմունքները, հոգեֆիզիոլոգիայի հետազոտական մեթոդները ըստ նշանակության, կարճատև և երկարատև հիշողության առանձնահատկությունները, ուշադրության գործընթացի առանձնահատկությունները, տեսաշարժողական հակազդման ժամանակի առանձնահատկությունները, սրտային ռիթմի փոփոխականության բնութագրերը, մարդու վարքագծային ռեակցիաները, անհատական-տիպային հատկանիշները:

2.3 Մեկնաբանել՝ մարդու ֆունկցիոնալ վիճակը, ֆունկցիոնալ համակարգերի գույակցված գործունեությունը, կոգնիտիվ գործընթացների դրսևորումները՝ պայմանավորված ֆունկցիոնալ

վիճակով, սրտային ռիթմի փոփոխականության բնութագրերը, ուղեղի էլեկտրական ակտիվության բնութագրերը:

2.4 Ուսումնասիրել՝ կարճատև և երկարատև հիշողության առանձնահատկությունները, կամային ուշադրության կենտրոնացման մակարդակը, մտավոր աշխատունակության և ակտիվության մակարդակը, տեսաշարժողական հակազդման առանձնահատկությունները, սրտային ռիթմի փոփոխականությունը, ուղեղի էլեկտրական ակտիվությունը:

2.5 Բացահայտել՝ Կարճատև հիշողության ծավալը, Երկարատև հիշողության հետքերից ինֆորմացիայի վերհանման արագությունը, Կամային ուշադրության ծավալը և կենտրոնացումը, Մտավոր աշխատունակությունը, Գլխուղեղում ընթացող նեյրոդինամիկ գործընթացները, Սրտային ռիթմի դինամիկան տարբեր ֆիզիոլոգիական պայմաններում, Ուղեղի էլեկտրական ակտիվության կոմպոնենտները:

2.6 Կիրառել՝ էլեկտրասրտագրություն, էլեկտրաուղեղագրություն, հոգեֆիզիոլոգիական տեստերի գործածում, հարցաթերթիկային հարցում:

3 կտիրապետի

3.1 հոգեֆիզիոլոգիայի հիմունքներին,

3.2 հոգեֆիզիոլոգիայի հետազոտման մեթոդական մոտեցումներին, կոգնիտիվ գործընթացների հոգեֆիզիոլոգիական մեխանիզմներին,

3.3 գիտակցական և ենթագիտակցական գործունեության, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին,

3.4 սթրեսի և հուզականության հոգեֆիզիոլոգիական մեխանիզմներին,

3.5 ֆունկցիոնալ համակարգերի տեսությանը,

3.6 «ֆունկցիոնալ վիճակ» հասկացությանը,

դիֆերենցիալ հոգեֆիզիոլոգիա առանձնահատկություններին,

3.8 Աշխատանքային գործունեության հոգեֆիզիոլոգիա հիմունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեֆիզիոլոգիական հետազոտման նպատակը և խնդիրները: **Թեմա 2՝** Կենտրոնական նյարդային համակարգ (ընդհանուր տեղեկություն): **Թեմա 3՝** Հոգեֆիզիոլոգիական ուսումնասիրությունների ժամանակակից մեթոդները: **Թեմա 4՝** Զգայական գործընթացների հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 5՝** Զգայական համակարգերի ընդհանուր հատկությունները: **Թեմա 6՝** Շարժման հոգեֆիզիոլոգիա:

Թեմա 7՝ Հիշողության հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 8՝** Ուսուցման հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 9՝** Ուշադրության հոգեֆիզիոլոգիա:

Թեմա 10՝ Ֆունկցիոնալ վիճակ: **Թեմա 11**՝ Հույզերի (Էմոցիա) հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 12**՝ Գիտակցության հոգեֆիզիոլոգիա:

Թեմա 13՝ Ենթագիտակցության հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 14**՝ Քուն և երազատեսություն: **Թեմա 15**՝ Համակարգային հոգեֆիզիոլոգիա:

Թեմա 16՝ Սթրեսի Հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 17**՝ Մտածողության հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 18**՝ Դիֆերենցիալ հոգեֆիզիոլոգիա:

Թեմա 19՝ Մասնագիտական գործունեության հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 20**՝ Համեմատական հոգեֆիզիոլոգիա:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 2, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

21/M01. Ներդրողական հիմունքներ (4 կրեդիտ)

Շարթթական 2 ծավ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսանողներին սովորեցնել, որ նյարդային համակարգը ղեկավարում է օրգանիզմի բոլոր ֆունկցիաները: Նա օրգանիզմի միասնությունը՝ ամբողջականությունը, իրականացնում է նրա բոլոր օրգանների աշխատանքը իրար հետ կոորդինացնելու միջոցով: Նյարդային համակարգը միաժամանակ իրականացնում է օրգանիզմի և արտաքին միջավայրի միասնությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

նյարդային համակարգի մորֆոլոգիական կառուցվածքը և նրա առանձին բաժինների ֆունկցիաները: Հեշտությամբ կարող են յուրացնել նյարդային բջջի, նյարդաթելի, ողնուղեղի, հետին, միջին, ուղեղիկի և առաջնային ուղեղի կառուցվածքը և ֆունկցիաները:

2. կկարողանա

իրականացնել՝ նյարդային համակարգի առանձին բաժինների ուսումնասիրման մեթոդները, նրա ուսումնասիրման վիրահատման

և ռեֆլեկտոր եղանակները, նյարդաթելի միակողմանի, երկկողմանի հաղորդման մեթոդը:

3. կտիրապետի

Իմանալով նյարդային համակարգի մորֆոլոգիական կազմվածքը և նրա առանձին բաժինների ֆունկցիաները, ուսանողը հեշտությամբ կարող է տարբերել նյարդային բջջի, նյարդաթելերի, ողնուղեղի, ուղեղիկի, հետին, միջին ուղեղների, առաջնային ուղեղի կազմվածքը և ֆունկցիաները:

Բովանդակությունը.

Թեմա 1' Կենտրոնական և ծայրամասային նյարդային համակարգի մորֆոլոգիան և ֆունկցիաները: **Թեմա 2'** Նյարդաթելերի ֆունկցիոնալ բնութագիրը և մորֆոլոգիան, ֆունկցիաները: **Թեմա3'** Ողնուղեղի մորֆոլոգիական կառուցվածքը և ֆունկցիան: **Թեմա 4'** Գլխուղեղի տարբեր բաժինների մորֆոլոգիան և ֆունկցիոնալ նշանակությունը: **Թեմա 5'** Հետին ուղեղի մորֆոլոգիան և ֆունկցիան: **Թեմա 6'** Միջին ուղեղի ֆունկցիաները: **Թեմա 7'** Միջանկյալ ուղեղի ֆունկցիաները և կառուցվածքը: **Թեմա 8'** Ցանցանման գոյացությունը և նրա նշանակությունը: **Թեմա 9'** Վեգետատիվ նյարդային համակարգի կառուցվածքը և ֆունկցիան: **Թեմա10'** Առաջնային ուղեղի կառուցվածքը և ֆունկցիաները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

21/M06. Էլեկտրաֆիզիոլոգիա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Էլեկտրաֆիզիոլոգիան որպես հետազոտման մեթոդ ուսումնասիրում է պրոցեսները, որոնք ընթանում են կենդանի հյուսվածքներում ինքնուրույն, կամ էլեկտրական հոսանքի ազդեցության տակ: Հատկապես նյարդային համակարգում

Էլեկտրաֆիզիոլոգիական մեթոդների կիրառումը թույլ է տալիս լուծել բազմաթիվ հարցեր, որոշել ԿՆՀ-ի տարբեր բաժիններում ֆունկցիոնալ – անատոմիական փոխհարաբերությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

նյարդային համակարգի ֆունկցիոնալ հատկությունների, նյարդային ազդակների առաջացման, հանգստի և գործողության պոտենցիալների առաջացման իոնային մեխանիզմների, ազդակների սինապսային հաղորդման պրոցեսների բնույթի, ուղեղի կեղևային և ենթակեղևային կապերի մասին:

2. կկարողանա

բնութագրել նյարդային համակարգի տարբեր հատվածների էլեկտրաֆիզիոլոգիական դրսևորումները, ուղեղի կեղևի և ողնուղեղի ֆունային ակտիվության և հրահրված պոտենցիալները, յուրացնել պոտենցիալների գրանցման որոշ մեթոդներ: Մեկնաբանել ուղեղի կեղևի տարբեր շրջանների փոխադարձ կապերի առկայությունը, այնտեղ պլաստիկ վերակազմավորման մեխանիզմները, բացահայտել ուղեղի կեղևում ամբողջականացման մեխանիզմները: Կկիրառել ստացված գիտելիքները ներդրող գեներատիվ պրոցեսների ժամանակ էլեկտրական դրսևորումների փոփոխությունները, ինչպես նաև տարբեր դեղաբանական բուժումների արդյունավետությունը:

3. կտիրապետի

նյարդային համակարգի բջջային և համակարգային մեխանիզմների, պլաստիկության մեխանիզմների ուսումնասիրությունը: Ստացած գիտելիքները թույլ կտան ուսանողներին տիրապետել էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտությունների տարբեր մեթոդների, կկարողանան կատարել էլեկտրական ակտիվության գրանցման ժամանակակից ներդրող ֆիզիոլոգիական հետազոտություններ՝ կիրառելով մեթոդներ, որոնք կբացահայտեն նյարդային համակարգում ամբողջականացման մեխանիզմները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Դրդունակ հյուսվածքի ֆիզիոլոգիա: **Թեմա 2՝** Սրտամկանի էլեկտրական ակտիվությունը: **Թեմա 3՝** Դրդման միջբջջային հաղորդումը: **Թեմա 4՝** Նյարդաթելերի ֆիզիոլոգիա: **Թեմա 5՝** Մեծ կիսագնդերի կեղև: **Թեմա 6՝** Գլխուղեղի կեղևի զագաթային ասոցիատիվ շրջան: **Թեմա 7՝** Ողնուղեղ: **Թեմա 8՝** Նյարդային համակարգի պլաստիկությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

21/M10. Տոքսիների քիմիա և կենսաքիմիա (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել տոքսիների քիմիայի և կենսաքիմիայի ոլորտին վերաբերվող հետազոտական առանձնահատկություններին, առարկայի, նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և տեխնիկաների մասին:

Բովանդակությունը.

Ծրագիրն ուսումնասիրելիս մագիստրանտը ձեռք կբերի տեսական և գործնական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև հետազոտական գործունեության ընթացքում անհրաժեշտ տեխնիկաների և տեխնոլոգիաների գործնական կիրառման վերաբերյալ, մասնավորապես. թույների հետ առնչվող ինֆորմացիայի հիմնական աղբյուրները գրականություն,ինտերնետ կայքեր/. բուսական, կենդանական և միկրոօրգանիզմների թույների կառուցվածքաֆունկցիոնալ առանձնահատկությունները. թույների նշանակությունը բժշկական տեսանկյունից. տոքսիների ռացիոնալ օգտագործում և պահպանություն

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

- 1.1 թույների հետ առնչվող ինֆորմացիայի հիմնական աղբյուրները /գրականություն,ինտերնետ կայքեր/,
- 1.2 բուսական, կենդանական և միկրոօրգանիզմների թույների կառուցվածքաֆունկցիոնալ առանձնահատկությունները,
- 1.3 թույների նշանակությունը բժշկական տեսանկյունից,
- 1.4 տոքսիների ռացիոնալ օգտագործում և պահպանություն:

2. կկարողանա

- 2.1 ինքնուրույն ձեռք բերել և օգտագործել պրակտիկ գործունեության մեջ նոր գիտելիքներ,
- 2.2 ձևակերպել, ներկայացնել և զեկուցել կատարված աշխատանքների արդյունքները:

3. կտիրապետի

- 1.1 մասնագիտական բնագավառում քննարկումներ անցկացնելու փորձին,
- 1.2 թույլների ընդհանուր դասակարգման սկզբունքին,
- 1.3 թույլների բնորոշ հատկություններին վերաբերող ինֆորմացիային:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տոքսիկոլոգիա առարկայի ընդհանուր բնութագիրը:

Թեմա 2՝ Բակտերիալ ծագման տոքսիններ: *Թեմա 3*՝ Միկոտոքսիններ:

Թեմա 4՝ Բուսական ծագման տոքսիններ: *Թեմա 5*՝ Կենդանական ծագման տոքսիններ: *Թեմա 6*՝ Թունավոր կենդանիներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

21/M11. Տոքսինների ծագումնաբանություն (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Տվյալ ծրագիրը կազմած է համապատասխան հանրապետական պահանջների պարտադիր մինիմալ բովանդակության հանդեպ դիպլոմավորված մասնագետի նախապատրաստման համար: «Տոքսինների ծագումնաբանությունը» դասընթացը հանդիսանում է անհրաժեշտ բաղադրիչ մասնագետներ պատրաստելու համար բժշկա-կենսաբանական ոլորտում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

- 1.1 թույլների քիմիական բաղադրամասերի հետ առնչվող գիտատեխնիկական ինֆորմացիայի հիմնական աղբյուրները,

- 1.2 թույլների բարդ բաղադրության մոլեկուլային կազմը,
- 1.3 թույլներում հանդիպող տարրերի ծագումնաբանությունը,
- 1.4 օրգանիզմում հանդիպող ֆերմենտների տոքսինների վերափոխման էվոյուցիոն ուղիները,
- 1.5 գիտա-տեխնիկական ինֆորմացիայի աղբյուրները /պարբերական մամուլ, Ինտերնետ կայքեր/, նվիրված թունաբանության առավել ժամանակակից հետազոտություններին:

2. կկարողանա

- 2.1 ինֆորմացիոն տեխնոլոգիաների միջոցով ձեռք բերել և օգտագործել պրակտիկ գործունեության մեջ նոր գիտելիքներ տոքսինաբանության ոլորտում.
- 2.2 օգտագործել իրավական և էթիկական նորմերի իմացությունը իրենց սեփական մասնագիտական գործունեության գնահատականի ժամանակ և սցիալապես արժեքավոր նախագծերի իրականացման ժամանակ.
- 2.3 տանել բիրլոգրաֆիկ աշխատանք, օգտագործելով ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, վերլուծել և քննադատաբար ամփոփել ինֆորմացիան.
- 2.4 ձևակերպել, ներկայացնել և զեկուցել կատարված աշխատանքների արդյունքները:

3. կտիրապետի

- 3.1 մասնագիտական բնագավառում քննարկումներ անցկացնելու փորձին,
- 3.2 մոլեկուլային թունաբանության ոլորտի տերմինաբանությունը, թույլներին բնորոշ կենսաբանական ակտիվ բաղադրամասերին վերաբերող ինֆորմացիային և նորանոր ինֆորմացիայի որոնման մեթոդներին,
- 3.3 թույլների պրոթեոմիքսի և տրանսկրիպտոմիքսի ոլորտում ժամանակակից նվաճումների կիրառմանը գիտահետազոտական աշխատանքների ոլորտում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն՝ Թունավորության ծագումը կենդանական աշխարհում: **Թեմա 2**՝ Գենոմից դեպի «վենոմ»: **Թեմա 3**՝ Թույլների բաղադրության բարդ մոլեկուլային խառնուրդ: **Թեմա 4**՝ Օձերի թույլների մետաղպրոթեազներ՝ ՄՊ: **Թեմա 5**՝ Օձերի թույլների ֆոսֆոլիպազներ՝ ՖԼՊ: **Թեմա 6**՝ Օձերի թույլների ֆոսֆոլիպազներ՝ ՖԼՊ: **Թեմա 7**՝ Օձերի թույլների այլ տարածված ֆերմենտներ: **Թեմա 8**՝ Օձերի թույլների բնական ինհիբիտորներ՝ ներքին իմունիտետ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

21/M15. Նեյրոդեգեներատիվ պաթոլոգիաներ. նեյրոֆիզիոլոգիա (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով գիտելիքներ հաղորդել նեյրոդեգեներատիվ պաթոլոգիաներ, նեյրոֆիզիոլոգիա ոլորտին վերաբերվող առանձնահատկություններին, նեյրոդեգեներատիվ հիվանդությունների էթիոլոգիայի, պաթոգենեզի, կլինիկայի և բուժման մեթոդների մասին: Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական և գործնական գիտելիքներ նեյրոդեգեներատիվ պաթոլոգիաների մասին, ինչպես նաև ժամանակակից բուժման մեթոդների կիրառման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

